NOUVELLE BIBLIOGRAPHIE ARMÉNIENNE ET ENCYCLOPÉDIE DE LA VIE ARMÉNIENNE

1512-1905

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔԻ

ԿԱԶՄԵՑ

Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԱՐՈՍ ՂԱԶԻԿԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Ա — Մ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

1909-1912

ՀԱՅԿԱԿԱՆ

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔԻ

1512-1912

Հայ Տպագրութեան Ջորհարիւրամեակն ահա կը լրանայ, և Հայութիւնն ամենուրեք պատրաստութիւններ կը տեսնէ զայն հանդիսապէս տօնելու. կը լրանայ ահա և «Հայկական Նոր Մատենագիտութիւն և Հանրագիտարան Հայ կեանքի» սոյն գործին առաջին հատորը։ Ինչպէս յայտնի է, սոյն գործիս առաջին թիւրթը՝ իբր նմոյշ՝ տպուած էր Ալխտիս Ալրհիապատիւ Դիտապետին Քահանայութեան Յիսնամեայ Յոբելեանին առթիւ (1904) և իրեն ձօնուած՝ իբր ամենէն աւելի զարգացրնողն ու կատարելագործողը Մխիթարեան տպարանին։

Ալդ նոյն Ալրհ. Դիտապետը կը յուժարի սիրով որ նուաստ երկասիրողը՝ ոսկի նաթօտով մ'իրարու զուգելով երկու արջանիկ Յոբելեաններըը՝ նուիրէ սոյն Գործը Հայ Տպագրութեան Ջորհարիւրամեայ հրաշափառ տօնին։

Նուաստ երկասիրողը՝ ձգելով այս փոքրիկ լուման այդ հոյակապ Հանդէսին գանձանակին մէջ՝ նուիրական պարտք կը համարի մաղթել Ալխտիս Ալրհիապատիւ Դիտապետին երկայն և երջանիկ տարիներ, և Հայ տպագրական գործին՝ և եւս բարգաւաճում և զարգացում։

Հ. Ալսէն Գ. Գազիկեան

20 Օգոստոս 1912

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

(Բուռն Յառաջաբանը, բնիծայականը, նո, նո, վերջին պրակին համ)

Գործս առաջին ներկը լույս տեսաւ Ալեքսոյ Աղթի. եւ Վերապայծառ Աբբահօր Քահանայութեան Յոմանեակ Տարեգանդն առեւ (7 Յունուար 1904), եւ ամբողջանդ օրը իրեն ընծայուեցաւ։ Քանի մ'ամիս վերջ ալ առաւ տպագրութենէն եւ նուռեր էր մնացեր 36րդ ներկը, երբ աշխատանքնառս տաժանքէն առաջ եկած նիւանդութենէն մը՝ բժշկին խրհուրդին վրայեալ՝ ստիպուեցայ զիս 1905ի կիսան՝ 6 ամսոյ չափ դադրեցնել գործս։ Այդ 6 ամիսը՝ հանգստութենէ պարագաներէ՝ երկարեցաւ մինչեւ 1907ի սկիզբը ամիսը։ եւ ես ինչեւ ի վերջոյ՝ այդ տարուան մեջիսէն սկսայ գործս վերսկսելու, բայց նախորդ գրաւորութեան անկիսատութեան դիրքի մէջ գլխովս՝ տպագրելու որ ի յորդ եւ ի զարդ գար։ Այս տպագրութեամբ անցաւ մէկուկէս տարի[1], եւ ի վերջոյ՝ տպագրուեցաւ եւս ինչ գրուածն բոլոր գրքերը՝ երկրորդ անգամ ըլլալով անհնարին հրատարակել, օրերով, շաբաթներով գանձել նուռանութենն վրայ եւ կարգադրել ցուցակը, որմէ վերջ՝ այն է 1908ի Նոյեմբերի կիսան՝ սկսաւ տպագրութենէնդ՝ 38րդ ներկէն սկսեալ։ 37րդ ներկը տպուած առանն վերջ չգլխովս՝ մէջը չուռ տպարանին կան։ Ես պիտէի վրայ կատարուած ուսումնասիրութեանց բաժինէն՝ ձեռագրէս էջ մը դադրած է մնացեր, զոր՝ ինչպէս եւ ուրիշ չուռ մը ներածութիւններ՝ պիտի դադրեմ, գործս ՅԱՒԵՐԺՈՒԱՆՆ ԵՒ ՈՒՂՂԱԳԻԾՔ։

*

Հոս նորէ է հանդիսանալ պարզեմ թէ ինչպէս ոչ գլխովս այս տպագրի ուշադրանքն տակ դրի։ 1898ին էր. 20–25 տարիէ տետրակներու կոյտերդ մը ձեռքէ ձեռք՝ տանելով քանիներու կամ քանիներ ու կարդալով մէկ եղած՝ պատրաստէ վերջ՝ իմ ձեռքս նուռան։ Հ. Զարեհեան Մխիթարեան ձեռագիրն էր, որուն մէջ ուշադրութեան առնելով Հանդէս Ամսօրեայի 1897 եւ 98 տարիներուն գրքերը՝ պիտի տպագրէր իրը երկրորդ տպագրութիւն՝ ճեռքս, որ կանխաժամանակ էր, նուիրելը համարձակեցաւ բանեցաւ ինծի։ Պարտիս եմ լեցուն գանուածքս՝ չեմ գիտեր, յանձն առի. քանիցի. ուսուցչին տպագրութենէն (1883) կոտրտուած, սգացուած, եւ 83–96 հրատարակուած գրքերէն մաս մը գրացուցակներէ, ներածներէ օրինակուած, ծեփուած, նոր գիրք ուսուցնելու ոչ տող եւ ոչ հնարք։ Չարիկ եղաւ որ այդ մանր տետրակները կորսուեմ նախ եւ չգտա մեծագիր հատորներու մէջ վերցրնեմ, կորսուածիս մէկ կոտրմ օրինակելով միշտ, վասնզի երկու կողմն ալ գրուած կամ կպցուած էր։ Այս դժբնդակ աշխատանքնէն վերջ՝ քանի մը գիրք բաղդատեցի. տեսնեմ ոչ մէկ գրքի ձախսն կը հանդիպանակամ, բան գրքի ձախսին, եւ ոչ իսկ իր գրքերունը. վասն զի բոլոր գրացուցակներդ հնացաքած էր.

1. Պատասխանի այդ պիտոյն մէջ էր որ Քարգմանութեան Հերարեի քերքուածներուն չորսէն երեքը և ամբողջական, Դասագրի Երուսաղէմ Ագաթանգեղ և Վիրգիլի Կենսականը. որոնցմէ առաջինը ու վերջինը ինգհովպի մէջ երեցան ու կ'երեան, իսկ միջինն ամբողջ երբ մը Պ. հրատարակուեցաւ Անահիտ (1908. Թ. 1–4) մէջ, ուր Պ. Ա. Ջոպանեան այնքան կեղծիկ փնաշատութիւն մ'ըրած էր այս երեք գործերուս մասին, որուն հրապարակ կը յայտնեմ շնորհակալութիւնս։

*

[illegible] առաջ գրաւման մէջ գանուած գրքերուն կէսն իսկ նշանակուած չէր։ Ջիս ամենէն շատ յոգնեցնողը այդ դժոխային աշխատանքին եղած է, եւ զոր տեղ... Եթէ ուղղակի գրաւման ցուցակէն առաջնորդուելով սկսած ըլլայի այդ աշխատանքին՝ առանց քակելու այդ կապոցը, ամենէն քիչ երկու տարի տեւած տատանած կ'ըլլայի, եւ Գոթօ չատ աւելի կարգաւորեալ կ'ըլլար քան ինչ որ է այժմ։ Ոմանք կրնան ըսել, այնու ամենայնիւ՝ որ այդ աշխատանքին վերջ երկար անգամ կազմած նամականիներուս վրայէն անցայ՝ արբանեակը, մթերքնակութիւնը տալու, դասաւորելու, կոչտմանելն ընելու համար, դեռ մնացած են ինչ ինչ բաներ։ Չատ մը օրինակի համար. *Աստուածամանուկին* պիտի չգտնեմ եմ *Դախչուռնցի* (Պ. Լեպսիուս)ի, մինչ այն ինքն *Ընդգումանցին* է. եւ երբ վերջերս *Խալիլ-գեանցի* գործերը կը պատրաստէի, անդրադարձայ, եւ աւելի լմնցնելի *Յաւելուածին* մէջ դնել, քան *Դախչուռնցիին* տակ. այսպէս նաև եւ ուրիշ ինչ ինչ բաներ։

*

Ցախնեղը առած մը կայ. En mangeant vient l'appétit. բայց մէ չորչորուելով ալ չորչորուելու ախորժակ կու գայ. կ'երեւայ, այո. վասն զի այդ տարաժամանակին նեղութիւնները փոխանակ վհատելու կամ ձանձրանալու, սկսայ մէկ կողմէն բոլոր ինչ գրագրուցակցութիւնքի՝ բաղդատել ձեռագիրս հետ, եւ պակասները՝ գրելով ադդին, գրելով անդին՝ բերել տալ, եւ ինչ տեսութիւնքի բան՝ գործ ունենալով գրավաճառներու հետ. 2000ը անցած բերել տուած գրքերուս ամբողջութիւնն մէն ալ քրի նայն նպատակով ի Պոլիս. եւ դարձեալ միւս կողմէն՝ սկսայ գիտցուցակի աշխատութիւնն ու բոլոր յուշկապներն ու պարբերականները մի առ մի սկսէ անցընել։ Ի սկզբան՝ ոչ մէկ ծրագիր չունէի. ծրագրին կազմուելն ու ներզգեցուած ընդարձակութիւնը մէկ եղաւ, եւ որ չեայ դեռ սկսի բոլոր՝ արդարանալու տարիներն։ Դպրատան նախ գրախօսականները, ներկայացոյց վրայ եղած ուսումնասիրութիւնները, եւն., ետ ետէ երեսցնել անպղտոցաբար ընդլայնցուց ծրագիրս. սկսայ բանասիրական յօդուածներն ալ ետ ետէ ընել, եւ դեռ չեայ ուրիշ գրականութիւնք մը ծանօթանալ յօդուածներէ, եւ տարբ նշանաւոր տոմարներու եւ ոչ – գրական ազգային մեծ դէմքերու վրայ գրուածներն տեսակցիլ, եւն։ Ծրագիրս այսպէս տարեցտարի ընդարձակուած ըլլալուն՝ բնական է որ պակասներ ունենար, զոր պիտի լրացնէի կրկին անգամ ետ ետէ անցնելով առաջին տետրակները, զորս նշանակած էի առանձին տետրի մէջ. բայց գործիս ընդհատման միջոց այդ ինչպէս եւ ուրիշ ինչ կարեւոր նկատելու տեսութիւնները տեսայուցեր են։ Այս պակասը տակաւին լրացնելու կեայ է։

1904ը՝ նոր էր ծագել, երբ եւս ծայրն հասնելով այս տարւան աշխատութեանս՝ Ոչխասիա Աթին. եւ Գերեպ. Աբգարեան Յարութիւնեանին տեսնելով հանդերձ գործիս նախշը, զոր ուղարկեցի քանի մը ծանօթներու եւ նամակակիցներու, որոնց գրածներէն սկսայ տեսութիւնս վերջը։

*

Դժուարագոյն պարագա որ տակաւ լայն կը տեսնէ՝ եղեւ կը պարզէ ծրագրիս իրագործուածը մասը, բայց ուշադրութ չեմ հանդիպիր քանի մը խոսք ըսել իմ կողմէս։ Ինչպէս կը տեսնուի ստորեւ, 1512էն մինչեւ 1800 եղած

1. *Ուրացեալ Աբգիարը՝ որ այն ատեն վ.ննակ կը գանուէր, տեսնելով գիս մատենակրի այդ գործին մէջ՝ կ'ուզէր ձեռքը լուսանկարիչ գործիք մը չունենալը. բայց պիտի գրչանկարեմ կ'ըսէր։ Գահիրէէն գրած (23 Յուլիս, 1906) մէկ նամակին մէջ կ'ըսէ. «Անշուշտ Մատենագիտութիւնը շուտ կ'ելլէ – գոնէ ե՛ս չմեռած – որպէս զի կարենամ քիչ մը «ճչօշմիշ» ըլլալ»։... Չէր Աբգիար։ Գնահատելով հանդերձ աշխատութիւնս, որուն տպուած թերթերը հաճոյքով կ'առնէր, միշտ կը մտմտար, ըսելով թէ «այդ գործը ամէն մարդ կրնայ ընել, դուն թարգմանութիւններուդ նայէ». և վերջ յիշուած նամականին մէջ կը գրէ. «կը յուսամ թէ Մատենագիտութիւնը արագագայլ առաջ կ'երթայ, ու մէյմը ատ ծանր «գլոմբաղէն» պրծիք նէ, ա՛լ քիչ մը շունչ կ'առնէք և վերջապէս «գլուխ գործոց» թարգմանութիւնները կու տաք։ Լէօթարտիին աշխարհաբարները շատ պատուական չէին։ Անշուշտ ամէնուն հաւաքածոյ մը կը հրատարակէք»։*

2. *Ուր տարի տեսնելն այդ աշխատութիւններս. կ'աշխատէի օրն ի բուն, միայն իրիկունները՝ ղէխուս և աչքերուս քիչ մը հանգիստ տալու, մանաւանդ թէ չխենդնալու համար՝ կը պարապէի Ռեցմավեպ–Գէղուճեանի խմբագիր – աշխատակցի պաշտօնին. իրիկուան այդ ժամերուն էր որ Թարգմանուեցան՝ Խոդով «Պատմութիւնս կոմիսին անձին», «Քիոզոնաս», «Հնկրոն» և նման ոչխարչութիւնները՝ Տանգէի «Թժոխքն ու Ջաւարանը», Օ. ոլանի «Գնրթուածնները», Վ. Աղանուրի «Յաւիտենական գրոյցը», և ուրիշ մանր մունր գրութիւններ, իսկ հիմա օրուան բոլոր ժամերս նուիրուած են այս գործիս։*

տպագրութեանց համառօտ նկարագիրն բաւական եմ, դնելով նաեւ Հիւսառակարանները, որոց օգտակարութիւնն քան ևս՝ հեղակի է. դարձեալ Յառաջաբանները լինի կարեւոր նաեւ մանաւանդ, ըստ որում ինքն տպագրութեանց՝ ըստ նախնեաց գործերուն։ Գալով այն գրքերուն՝ որոնք Հայկական կեանքով կը գրուին, բանասիրական, պատմական, աշխարհագրական, ճանաչողական, եւն, եւն, տեսակէտներով, կարեւոր համարելոց ուշադրութիւնները դնել. որպիսեաւ կը կարծեմ՝ որ ինչպէս եւ՝ նախապէս ամէն Հայ անհատ կը փոփոքի կարդալ, իմանալ ինչ որ գրուած է իր ազգին վրայ. եւ զի նպատ չէ որ ամէն Հայ անհատ ուշադրեալ այդ գրքերը, ես ուզեցի տալ ամէն Հայոց ձեռք գիրք մը՝ ուր խտացած ըլլան անոնք բոլոր գիրք մը՝ որ իր մէջ գրաւոր ունենայ բոլորդակէ. Կարդալէ ետքը բնաբան օգտուիլը։ Այսպէս ինչպէս եւ ինչ տպագրութեանց Հիւսառակարանները մտնելն՝ ոչ որ դիտողութիւն ըրած նկատած է. մանաւանդ թէ Պ. Էջո, եւ Ա. Զօրպանեան անդամք բոլոր ինձի չհաճեցան ծրագիրս։ Այլեայլն գրոց բաշխագրութեան մասին մէկ նպատ միայն դիտողութիւն ըրաւ հանգամով, զոր պիտի տեսնենք վարը։

Գտառութիւնները ըրած եմ քան ատեանց նկատմամբ, քան անուանց գրոց, եւ քան նիւթոց։ Դասընթաց բան անուան ներքեւ դրուած են իրենց գործերը. *Մովսէս խորենացի*. վերջնոս մնասուղը՝ պիտի գտնէ՝ տես *Մովսէս*—, եւն։ Յատուկան անուանութեան քով օգտակար համարեցայ դնել նաեւ եւրոպական, եւ ծագումնաւոր գրքերուն տիտղոսները՝ միտքս ուր որ կրցաւ հասնիլ ձեռքս տես այժմ։ Այլ անուանց տառադարձութեան գալով, միեւնոյն անուանը տարբերեալ ձեւերուն չգտա, նկատ անպատճառ դնել. ոչ տառերացդը եւ ոչ ուղղագրի համեմատի չեն իրենք իրենց մէջ անպատճառ. տես՝ նոյն։ *Խորենացի*. Խորենայ, ուրուն. *Տորոնայ*, *Տորոնոյ*, *Տորոնայ*, *Տորոնօյ*, այլպէս եւ ուրիշներ։ — Չկին եղ նոր տպագրութեանց ուղղագրութիւնները ուղիղագրութիւնները անվրիպելի կը մնան։ Գործոյս մէջ մասամբ կը համեմատեցայ եւրոպական գրքերը նոյն յօդուածները կը մանան գործոյս մէջ, եւ ես վերջնոյս՝ օրեր ու օրեր՝ վկնանալով Ա. Մարկոսի գրաւոր նամակներուն եւ Müllerի հիմնած «Orientalische Bibliographie» գործին 20ի չափ հատորները, եւ ամենաբան հատուածներ. կը պակսէր Friedericiի «Bibliotheca Orientalis»ը. ազնիւ Գրագիտուր՝ Աստիս Տոքթ. Յիրագի՝ որուն ծանօթացած էի միջնորդութեամբ նոյնպէս եւ հայրապէտ Բոմի. Գնացի, տասը հազարէն բնիկ տասը Բարիզէն։ «Journal Asiatique»ի մեր գրասան մէջ գտնուած հատորները աչքէ անցընելէ վերջ, գացի եւ Ա. Մարկոսի գրասանը, բայց դժբախտաբար նոն ալ պակասաւոր էր, կը հասնէր մինչեւ 1862 տարին։ — Հայոց տառերէն ներկերը կազմուած չըլլալով չեմ կրցած քննել. նոյնս ալոյ կորզուտիլ եւ կազմել տալ. Հատերէն լեզուով անշուշտ շատ գրուածներ կան մեր մասին, բայց այդ լեզուն նոյն անծանօթ ըլլալով չեմ կրնար օգտուիլ. բաւ կ'ըլլար որ մեր Հատանոյ եղբայրներք այդ գրուածները ծանրանային կամ գոնէ տեղեկութիւն տային անոնց մասին իրենց ներածութեան մէջ՝ խնդրագրին նոյնպէս ծանրանալու ալ դնելով։

Այսպիսի մանրատառ եւ ծխելով լի գործի մը մէջ դիւրին է եղ սխալներ ապրիլ՝ եղես ամէն ջանք կը ծախսուի. կամ՝ զուտ մարդ չի գտնար եղ ինչպէս կ'ըլլան. հատ մը օրինակի համար. էջն 206՝ *Աստուածաշունչ մատեան* 1669 ետած է, մինչ քանի մը տող վար՝ 1666 է, որ է ուղիղը. պէտք է մտածել որ գրաշար՝ տպող խոտորացի են։ Էջն 380, *Աստուածն խոստովելոյն* ներքեւ դրուած է «Թաղադեանցի *Աստուած* լրագիր 1844». տպուած ձեւն ներքեւնոն ծանօթութիւնները չկան՝ որ առաջէն եղ այս այլմոլոգ տիտղոսը ինչպէս եղեր է։ Պիտի ըլլայ *Այգաւէր* 1847, էջ 361։ Կրնան ըլլալ ուրիշ եղերքու տիտղոսներ ալ, որոնցմէ տեղոյ համոզուած եմ, եւ ոչ մանր բոլոր կը նշանակուին իմ Քրիստոսեալ օրինակիս մէջ եւ կ'ուղղուին գործոս «Յառաջաբան և Ներկիք»ին մէջ։ Կան ալ ոչնչացած պատճառ կ'ըլլան ներկերը, երբեմն նոյն իսկ Թարգմանիչներք, որոնք չեն դներ ներկոնական անուններ. հատ մը էջն 631, *Ջարմանոյի սրդ*. Կատվեցվելոյի գործն է, որ տիտղոսիմ հատ գրուած է. (հմմտ. *Ազբիւր* 1896, եր. 3–6, էջ 236, ուր գրուած է տեղոյ ներկեալի անուան)։ Գործոյս ձեռագիրս այնպէս ծեփուած է լրագիրներէ, տպագրութիւններէ քաղած նկատներով՝ որ դիւրին է այսպիսի վրիպումներ ապրիլին, աչքէ վրիպելին, էջեր կան որոնց մէջէն ելլելը՝ կատարեալ մարտիրոսութիւն է։ Բայց ամէն ինչ իր ուղղ ձեռք կ'առնէ եւ պիտի

սունէ, ո եւ է հոգի պատճառ չկայ։ Գործս կը նուիրեմ մինչեւ 1905 տարին. ինչպէս դրուած է Տանկրեմի վրայ. բայց այս տարիէն ալ մուած եմ՝ մնալու համար վերջին ներկայութեան մէջ։ Հաւերսաճս պիտի ըլլայ 1905 էն մինչեւ վերջին պրակին հրատարակութիւնը։ Պրակներուն հետզհետէ պիտի հանի։

*

Հինա հոգի է որ պարզամ հոս ծրագրիս միւս մասը՝ որուն համար աղօթս նուիրելը կուզայ սոյն պրակին մէջ։ Նախ ըսեմ որ *Մատենագիտութիւն* բանալ ես չեմ հասկնար լսկ գիտնալ ես այս ոք կամ այն՝ ինչ գիրք գրեր է[1]. այլ նաեւ գիտնալ ես ինչ նիւթերու վրայ կը խօսի։ Այս հասկացողութեամբ էր որ դրի սրբէն ազգային գրոց բովանդակութիւնները. բայց մեր լրագիրներն ու հանդէսներն ալ ազգային գրքեր են, մանաւանդ ես մեր ազգային կեանքին չտեսնանունները են։ Այդ՝ ազգային ունէ *իր* կամ *գիր*, *գէպք* կամ *գէմք*, *նչմար* կամ *նչխար*՝ զոր կը բովանդակէ հայկական լայնածաւալ լրագրութիւնը՝ բոլոր պիտի մըտնեն գործիս մէջ. սակայն սրզգայն կեանքով զբաղող ինչ յօդուած որ կայ բանասիրական, պատմական, տնտեսագրական, հնախօսական, եւն, եւն. ինչ որ գրուած է այս կամ այն քաղաքի կամ գիւղի տարածութեանց, բարբառին, սահմանութեանց, հնութեանց, եկեղեցիներուն, վանքերուն, դպրոցներուն, ծանօթագրութիւնները, ծանօթութիւնները, ընկերութեանց, եւն, եւն. ինչ որ գրուած է աշխարհիս մասին, իրենց երգերը, եւն, եւն. մէկ խօսքով ՀԱՑ ԿԵՍՈՑԻ հետ առնչութիւն ունեցող ամէն բան՝ միանալով գրքերու մէջ այն նիւթերու մասին գրուածներուն հետ՝ պիտի խըտանայ գործիս մէջ։ Եւ այսպէս պիտի ըլլայ իմ գործս ոչ լսկ «Մատենագիտութիւն», այլ նաեւ «Հանրագիտարան Հայ կեանքի»։ Պիտի չունենք դեռ ոչ սրզգ. վարժարաններու, ոչ ծառայող, ոչ ծանր գործարանաց, ոչ ընկերութիւնց կանոնագրական բառերու մը, ոչ ազգ. ժամանակակից պատմութիւն մը. սակայն պէտք է յոյսնանք, պէտք է օգնել անոնց ապագայ հետիհանգիստներուն։ Այս իմ փափաքս կրագործելու համար ես սկսած եմ *կրկին անգամ* կորել անցնիլ լրագրութեան ակկանդ՝ մանրակրկիտ կերպով մաղելով բոլոր ամսոյ էջերը. գործ մը՝ որուն ծանրութիւնն որուհոյ բան չունի գիտցած հայերէնս։ Պիտի բոլոր հետզհետէ կը մտնեն գործիս մէջ եւ ձուլուելով կ'ամրոջանան։ Սրզգայն գիրքերու բովանդակութեանց *մանրամասն* կարգ մտերին բան չեմ դնէ. անոնք ալ պիտի ըլլան բոլոր։ Գալով տարբ լեզուներէ եղած թարգմանութեանց, պիտի եմ հաւատալ անոնց այնպէս ինչպէս եղած են։ Ամէն հոգի պիտի ունենայ գրքագիտական նկարագրութիւնը. *յատկութիւն* անուան տակ պիտի տեսնուին ոչ միայն իր այս կամ այն գրքին մէկ կամ երկու թարգմանութիւնները, այլ եւ իր այս կամ այն տարբերութիւն մէկ կամ երկու կամ երեք թարգմանութիւնները ալ, եւ երբ սկսիմ գրքերը բրթրել՝ ծանրաքաշութեան մէջ եղածները ալ. այսպէս ամէն տարբ հետզհետէ *միչտ* հետզհետէ ունենալու ուժգնութիւնը։ Գիտեմ արժանիք ունեցող բոլոր հնչակեան յօդուածները ալ պիտի մտնեն։

*

Հրատարակը կը սեռնէ ես ինչ անուտ, ապրուստի գործի ձեռնարկած եմ՝ ունէ տպագրելու անբաւ տարժանքներէ վերջ։ Կը խոստովանիմ որ ես այս գործին մարդը չէի. ես իմ կեանքս անցուցած էի ոտանաւորելու հետ խաղալով, Բագրատունիին բոլոր գործերն ուսումնասիրելով, բաղդատելով իրենց քնագիրներուն հետ, բառգիրքներ չհետելով, եւ դիւցազ էի ուղղագիր՝ իմ *խաչափ* համար։ Եւ ահա հարկն ստիպեց նոյնական ծրագիրս փոխել, այնինչ է գրաբարէն աշխարհաբարելն անցնիլ, բայց արուեստը նոյն կը մնար, որուն աշակերտած էի բոլոր կեանքս։ Պատրաստ էի հին ու նոր ազգերու հրատարակութիւնները՝ արձակ ես ոտանաւոր՝ աշխատութեամբ հայացնել 50 հատորներու մէջ. ահագին խոշոր է, բայց երբ նկատի առնուի իմ եռանդս եւ սէրս այդ գործին՝ խոշոր չի երեւիր. 140 օրուան մէջ հանեցան Գառոյի 20 երգերը իմ ձեռքերուս մէջ. եւ վերեւ յիշուած ապառաժի մէկ ու կէս տարին տուաւ ինծի 35,000 ոտանաւոր տող. այս՝ ո՛չ անձնագովութեան համար կ'ըսեմ, այլ նախ՝ մանկամարդ ենք՝ եթէ չյուսահատինք ապառաժին, գանք ծրագիրս մնայ, (սոյն Գործը սիա գողցաւ իմ ծրագիրս 20 հատորը, 20 մըն ալ պիտի գողնայ դեռ), եւ երկրորդ՝ ցուցնելու համար զոհողու-

1. *Այս պաշտօնն է ցուցակի մը, որ արդէն սկսած է առանձին տպագրուիլ, և Գործիս վերջին պրակին հետ լոյս պիտի տեսնէ «Ազգային Մատենագիտութիւն» խորագրով։*

ներկայ պրակին վերջին էջերը միայն կը-
գան օգտակար անունքիդ։ Դիտելիք կը յայտ-
նեմ չտպագրելուս պատճառները ներկայիդ
գրած նամակներուդ մասին պ. Ա. Ա-
յօդ տեսնելուդ, որ ջանաց ամէն ազնուու-
նեամբ եւ պատրաստակամութեամբ գո-
նացած ըլլալ այս կամ այն գրքի կամ նե-
դիտական մասին բաժ նորդագրութեան։ Կը
խնդրեմ որ ազգային ներկներու մէջ ըլ-
նելու դիտողութիւնները, նշանակելու սխա-
լանքները, ղրկելով յանդգնութիւնները
որ այդ ներկներէն ինծի տեսնդին մէկ մէկ
օրինակ չդրկին)։ գործս նոտագրական գո-
ծիք մ'ըլլալու համեմատ է, տեսակ նորկ
եւ տրեհան է որ նոտագրութիւնը այս կամ
այն կերպով աղաւղկ գտնուի։ Ես մտադիր
էի այդ Գարծիս մէջ դնել նշանաւոր նե-
դիտական նամանօտ վարքը, իր փոքրացու-
ցած լուսանկարով, եւ 1904ին *Բազմավէպի*
միտը։ ի պարակով կոչ ալ ըրի. բայց նորկ
ներկ կամ չորս նորկ պատահմանց։ դոյ-
նը կ'ըսեմ նիսին նէս՝ տեղի ուժգին եւ
գեղատարպոյն։ Ներաքննչիս գրագէտ,
գրագետուհի, նոտագիտնչ, դերասան եւ
ազգային ոեւէ գործիչ ճաճելին գրել նո-
մատոտիկ իրենց կենսագրական։ ուր եւ
նոյ ծնած են, ուր ուսած, ազգ. ինչ արդ-
ասին վարած, գրական կնճռոք, աշխատակ-
ցութիւն կամ խմբագրութիւն ոյս կամ այն
ներկին, եւն, եւ լուսանկարով միասին
յղէին։ Կրնէ կոչս լսելի ըլլայ, Ճանեցուցիչն
մէջ կ'իրագործեմ եւ այս փափաքս։

Ներէ գիրք, ներկ, դիտողութիւն, կնճռ-
ագրական նկատողութիւններ, լուսանկար, եւն, ղրկել ու-
զածդ իսկ նոտագիրս։

Կը յուսամ որ Գարծիս մտադրածին ներ-
կութիւնները ներդաշնակութեան կը հանդի-
պին, նկատի առնելով դժուարութիւնները։ եւ ես ինքզինքս նոյնպիսի պիտի հանգս-
րիմ՝ եթէ իմ ոյդպիսի գործերս զոր ըրի եւ կ'ընեմ, եւ քաղաքներս զոր տես-
փեցի եւ կը նկարեմ զուր չեն վաստուած,
եւ ո եւ է օգուտ մը պիտի հասուցանեն
ՀԱՅԿԱԿԱՆ ԹՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ եւ ԿԱՆԳԻՆ։

Հ· ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ

4 *փետր*. 1909

Հասցէս՝ P. Arsène Ghazikian

ILE DE St. LAZARE **VENISE** (ITALIE)

ԳՈՐԾԻՍ ՆՄՈՅՇԻՆ ԱՌԹԻՒ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ

ՄԻ ԴԵՂԵՑԻԿ ԳՈՐԾ

Մի գեղեցիկ գործ որի վրա մենք մեծ հաճոյքով հրաւիրում ենք բոլոր հայ գրողների, թարգմանիչների և հրատարակիչների ուշադրութիւնը։

Այդ, գեղեցիկ, կասենք նոյն իսկ հսկայական գործը, գալիս է մեզ Վենետիկից, Մխիթարեան Միաբանութիւնից և գալիս է լրացնելու մի կարևոր պակաս, որ այնքան սաստիկ կերպով լրզգացվում էր մեր գրականութեան մէջ։

Նոր Մատենադարան – ահա ինչ է աւետում մեզ «Բազմավէպի» փետրուարի համարը. մի աշխատութիւն որ պէտք է լինի հայկական մտքի հայելի, որ պէտք է պարունակէ ցուցակը բոլոր այն հայ գրքերի, որոնք լոյս են տեսնված 1512 թուից, այսինքն առաջին հայ գրքի տպագրութիւնից, մինչև այսօր։ Ուրեմն Նոր մատենագիտութիւնը պէտք է տայ մեզ 392 տարվայ 1512–1904 հայ մատենագրութեան լիակատար ցուցակը։ Մինչէ իրաւունք չունենք ասելու, որ սա կը լինի մի գեղեցիկ և հսկայական գործ։ Ահիդ է, սա բոլովին նոր գործ չէ, որովհետև տարիներ առաջ 1883–ին , Միաբանութիւնը հրատարակեց «Հայկական Մատենագիտութիւն» անունով մի գիրք, բայց այն ինչ որ այժմ է հրատարակվում իբրև այդ աշխատութեան երկրորդ տպագրութիւն, հիմնովին բարեփոխուած է, սըրբագրված, ճոխացած, հետևաբար ներկայանում է բոլորովին մի նոր աշխատութիւն, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ 1883–ից ի վեր քը-սանամեայ չրջանում, ինչպիսի զարգացումն և բարեչրջումն է կրել հայ մատենագիտութիւնը։

«Բազմավէպի» յայտարարութիւնից երևում է, թէ ինչ մեծամեծ նեղութիւններ է կրել Միաբանութիւնը այդ մեծ գործը գլուխ բերելու համար։ Դա մի առ մի աչքից անցրել է վանքի գրատան մէջ գտնված բոլոր հայ գրքերը–տասժան աշխատութիւն – և բացի դրանից 2000 կրտորից աւելի գիրք է բերել տուել վանազան տեղերից։ Այդ բազմավաստակ աշխատութիւնը չատ թեթևացած կը լինէր, ի հարկէ, եթէ հայ հեղինակները, թարգմանիչները և հրատարակիչները, որոնց մի երկու տարի առաջ Միաբանութիւնը կոչ արեց մի մի օրինակ իրանց հեղինակութիւններից և հրատարակութիւնից ուղարկելով վանքին, նոյն իսկ ոչ իբրև նուէր, այլ փոխանակութեամբ, արձագանք տուած լինէին նրա կոչին և հրաւէրին։ «Աշխատասիրողը չատ դիմումներ ըրած է – գանգատվում է «Բազմավէպը» – բայց չատ քիչեր բաւեհաճում են պատասխանել»։

Այժմ ևս նա կրկնում է նոյն դիմումը և մենք ևս յորդորում ենք բոլոր մեր գրողներին, թարգմանիչներին, հրատարակիչներին, չը զլանալ մի մի, նոյն իսկ երկու երկու օրինակ ուղարկել «Բազմավէպի» խմբագրութեան իրանց գրուածներից, լաւ համոզված լինելով, որ դրանով նրանք կը թեթևացնեն այնպիսի մի ծանր և դժնդակ աշխատութիւն, որպիսին Հայ Մատենագիտութիւն կազմելու գործն է։

Դրա փոխարէն մենք, հայ գրողներս, կը ստանանք չուտով մի գեղեցիկ և օգտակար ու մեզ բոլորիս համար անհրաժեշտ մի հեղինակութիւն, որի համար առաջուց մեր չնորհաւորութիւնները և չնորհակալութիւնները ենք յայտնում Մխիթարեան բազմարդիւն Միաբանութեան, որ իր արժանաւոր ընդհանրական աբբահօր՝ Իգնատիոս Կիւրեղեան այքեպիսկոպոսի քահանայական յիսնամեայ յոբելեանի յիշատակին, մտածել է այդպիսի մի արժանաւոր ձօն մատուցանելու։

Հ(արություն) Ա(ճառեան)

Մայիս 1904, էջ. 28

«ՆՈՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

«Մշակի» մէջ արդէն հաղորդված էր, որ Վենետիկի Մխիթարեան տպարանում սկսվել է այս վերնագիրն ունեցող մի նոր հրատարակութեան տպագրութիւնը։ Մենք ստացանք այդ

հրատարակութեան առաջին թերթը, որ բաւականաչափ նիւթ է տալիս հասկացողութիւն կազմելու ամբողջ գործի մասին։ Մեր ստացած տպաւորութիւնը հաղորդում ենք ընթերցող հասարակութեան։

Հանգուցեալ Հ. Գարեգին Վ. Ջարբհանալեանը Վենետիկի Մխիթարեանների մէջ ունէր իր անձին Մատենագիտութիւնը։ Նա զբաղված էր զրականութիւնների (թէ հայոց և թէ եւրոպական) պատմութեամբ և ունի մի չարք աշխատութիւններ, որոնցից մի քանիսը, օրինակ, հայոց հին գրականութեան պատմութիւնը, չունեն իրանց նմանը մեզանում։ Գրականութիւնների պատմութիւնը բաւական չը համարելով իր ընդարձակ տեղեկութիւնները ընթերցող հասարակութեան հաղորդելու համար, Հ. Ջարբհանալեան 1883 թուին հրատարակեց «Հայկական Մատենագիտութիւն» անունով աշխատութիւնը։ Դա մանր տառերով տպած մի ութսնաձալ հատոր է, 735 երեսից բազկացած և այժմս սպառված մի հրատարակութիւն է։ Իսկ թէ ինչ է նրա բովանդակութիւնը, — այդ արտայայտել է ինքը, հեղինակը, առաջին երեսի վրայ տպած այս խօսքերով։ «Այբուբենական կարգաւ տպագրութեան գիւտէն մինչև առ մեզ եղած հայերէն հրատարակութեանց»։ 371 տարի էր անցել հայերէն տպագրութեան սկզբից մինչև 1883 թուականը։ Հ. Ջարբհանալեանի ծրագիրն էր այդ ժամանակամիջոցում տպված բոլոր հայերէն գրքերի ցուցակը տալ։

Գործի դժուարութիւնը ինքն իրա ինքեան հասկանալի էր։ Պէտք էր ունենալ մի այնպիսի գրադարան, որի մէջ հաւաքված լինէին բոլոր հայերէն գրքերը։ Այդպիսի գրադարան այն ժամանակ չունէին Մխիթարեանները. բայց և այնպէս, եղած գրադարանն էլ այնքան հարուստ էր, որ Ջարբհանալեանի այդ գործը բաւական հարուստ մի ցուցակ էր։ Բայց ով գործ է ուներ այդ ցուցակի հետ, նա գիտէ, թէ որքան պակասութիւններ կան նրա մէջ, պակասութիւններ որոնք ոչ միայն տեղեկութիւնների ակնարկութիւնից էին առաջանում, այլ և դասաւորութեան, սիստեմի անկատարութիւնից։ Վարուց զգացւում էր այդ ցուցակը նորից մշակելու, լրացնելու անհրաժեշտութիւնը։ Եւ այդ գործը իր վրա վերցրեց Հ. Ալտէն Գազիկեան։ Նա բոլորովին այլ սիստեմ է մշակել. նրա «Նոր Մատենագիտութիւնը» ունի այնպիսի հարստութիւններ, որոնց մասին Ջարբհանալեանի ցուցակը հասկացողութիւն անգամ չունէր։ Օրինակ, բայ ենք անում «Աբովեան»։

Այս անունը գրաւում է ամբողջ երկար մեծ, մանրատառ սիւնակ, որովհետև բերված են ոչ միայն Թաչատուր Աբովեանի գրուածքները, այլ այն ամբողջ գրականութիւնը, որ վերաբերվում է Աբովեանին. այդ տեղ դուք կը տեսնէք եւ քննադատութիւններ, եւ կենսագրութիւններ, եւ ասանձին ուսումնասիրութիւններ։ Այնպէս որ հետաքրքրվողը կարող է գտնել հարուստ, բազմակողմանի ցուցմունքներ՝ Աբովեանին ուսումնասիրելու համար։

Հ. Գազիկեան զնում է ոչ միայն գրքի անունը, այլ և առանձին առանձին յիշատակում է գրքի իւրաքանչիւր նոր տպագրութիւնը ու նրա հաղորդած տեղեկութիւնները հասնում են մինչև ներկայ օրերը։ Տալ ամեն մի գրքի մասին, որքան կարելի է, բազմակողմանի տեղեկութիւններ — ահա ինչն է Հ. Գազիկեանի նպատակը։ Որքան մեծ աշխատանք պէտք է թափել այդպիսի մի նպատակ իրագործելու համար։ Հ. Գազիկեան նոյն իսկ չէ բաւականացել առանձին տպված գրքերով. նա դնում է և այն աշքի ընկնող աշխատութիւնները, որոնք տպագրված են միայն պարբերական հրատարակութիւնների մէջ։ Հ. Ջարբհանալեանը այսպիսի աշխատութիւնների հետ գործ չէ ունեցել. այժմ «Նոր Մատենագիտութիւնը երկպատիկ պիտի ստուարանայ, եթէ կատարվէ և այդ գործը։ Մենք միայն 16 երես ունենք մեր առջև և դեռ չենք կարող ասել, թէ որքան ճիշտ ու կատարեալ է «Նոր Մատենագիտութիւնը» իր բազմակողմանի, հարուստ ծրագրի բոլոր մանրամասնութիւնների մէջ։ Բայց չենք կարող այժմից իսկ չասել, որ այդ գործը մի հոյակապ ձեռնարկութեան տպաւորութիւն է թողնում մեզ վրա։ Նրա դիրքը մեծ է, իւրաքանչիւր երես բազկացած է երկու սիւնակից, տառերը փոքր են, տպագրութիւնը մաքուր։

Յանկանում ենք Հ. Գազիկեանին աջողութիւն իր այդ ծանր գործի մէջ։ «Նոր Մատենագիտութիւնը», որքան էլ ղերծ չը լինի պակասութիւններից, մի գեղեցիկ ապագայ պիտի դառնայ, որ Վենետիկի այժմեան Մխիթարեանները գիտեն աշխատել իրանց նշանաւոր նախնիքների նման։

Մշակ 1904 թ. 64 Լ(ևս)

ԴԱՐՁԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Այս մեծածաւալ և կարևոր գործի մասին ես ամիսներ առաջ խօսել եմ «Մշակի» մէջ, հիմնվելով նրա առաջին թերթի վրայ, որ Հ. Գազիկեան ուղարկել էր խմբագրութիւններին։

Այժմ ես ստացայ «Հայկական նոր Մատենագիտութեան» նոր 11 թերթեր էլ և ծանօթանալով գործին, աւելի մանրամասնօրէն չեմ կարող նորից մի քանի խօսքով հայ հասարակութեան ուշադրութիւնը չը հրաւիրել Ա. Գազարի այդ նոր հրատարակութեան վրա։

Մատենագիտութեան հեղինակ Հ. Գազիկեանը չէ բաւականացել իր նախկին ծրագրով, աւելի ընդարձակել է նրան, աւելի բազմակողմանի է դարձրել։ Իմ առաջին յօդուածում ես արդէն չեշտել եմ, թէ որքան դժուարութիւններ պիտի յաղթահարէ Հ. Գազիկեանը, որպէս զի կարողանայ տալ Հայերէն բոլոր տպագրութիւնների ճիշտ, մանրամասն ցուցակը սկզբից մինչև այժմ։ Դէմքաւորը այն է, որ «Նոր Մատենագիտութիւնը» չէ բաւականանում գրքերի վերնագիրները, տպագրութեան ժամանակը, տեղը ցոյց տալով։ Դա կը լիներ մի մեքենական աշխատանք, որ, չը նայած իր դժուարութեան, հեշտ իրագործելի է։ Բայց Հ. Գազիկեան կամեցել

է գրքերի և հեղինակների մասին բազմակողմանի տեղեկութիւններ էլ տալ, ուստի բերում է աչքի ընկնող գրքերի, մանաւանդ հին տպագրութիւնների լովանդակութիւնը, յիշատակարանները և այլ այսպիսի տեղեկութիւններ։

«Մատենագիտութեան» դիմով ընթերցողը միայն այս կամ այն հեղինակի գրքերի ցուցակը չէ գտնում, այլ և ցուցմունքներ թէ առաջ երբ և ուր է խօսվել այս կամ այն գրքի, հեղինակի մասին։

Այս այս բոլորի մասին խօսել եմ իմ առաջին յօդուածում։

Այժմ կը ծանօթացնեմ այն ծրագրական նորութիւնների հետ, որ յետագայ թերթերում մտցրել է Հ. Պազիկեանը, դրանով աւելի ևս բարձրացնելով իր աշխատութեան նշանակութիւնը։ Հ. Պազիկեանը այլ ևս բաւական չէ համարում ցոյց տալ, թէ այս ինչ գրքի մասին խօսված է այս ինչ լրագրի կամ ամսագրի մէջ։ Կարևոր դէպքերում նա ուղղակի դնում է կտորներ այդ քննադատութիւններից։ Օրինակ, բայց ևնք անում Հ. Ալտէն Այտընեանի աշխատութիւնները, որոնց մէջ առաջնակարգ տեղը գրաւում է յայտնի «Քննական Բերականութիւնը»։ Հ. Պազիկեան նախ և առաջ դնում է գրքի մանրամասն բովանդակութիւնը, ապա բերում է հայազէտ Պետերմանի քննութիւնը, արտատպելով «Սիօն» ամսագրից. այդ քննութիւնը գրաւել է «Մատենագիտութեան» 3½ սիւնակներ, մանր տառերով։ Անցնելով Հ. Այտընեանի միւս աշխատութիւններին, Հ. Պազիկեան բերում է հեղինակի գրած առաջաբաններից կտորներ, որոնք ընթերցողին հասկացողութիւն են տալիս այդ գրքերի մասին։

Իսկ թէ որպիսի մեծ ուշադրութեամբ է վերաբերվել Հ. Պազիկեան դէպի մեր նշանաւոր քերականագէտը, երևում է այս տեղեկութիւններից, որոնք վերաբերվում են Հ. Այտընեանի կենսագրութեան։ Ահա տեղեկութիւնների վերնագիրները. 1) Դրուածներ, 2) Ջօբէլեանին առթիւ, 3) Այտընեան Լուսեցագիտական հիմնարկութեան առթիւ, 4) Այտընեան և աշխարհիկ լեզուն, 5) Մահուան առթիւ։ Իւրաքանչիւր վերնագրի տակ հաւաքված են մի խումբ ցուցմունքներ զանազան լրագիրների և հրատարակութիւնների մէջ եղած յօդուածների մասին։

Այսպիսի մանրամասնութիւններ բովանդակող ծրագիրն է պատճառ, որ «Նոր Մատենագիտութիւնը» Հ. Ալիշանի լեզուաւոր գործունէութեան նուիրել է ամբողջ 17 երես։ Ոչինչ չէ մոռացված. նոյն իսկ Ալիշանի այն յօդուածները, որոնք զանազան ժամանակ տպագրվել են Բազմավէպի մէջ, մանրամասն արձանագրված են բովանդակութիւններով ոչ միայն տպված, այլ և անտիպ աշխատութիւնները։

Մի ուրիշ նորութիւնն էլ այն է, որ Հ. Պազիկեան, բերելով մի հեղինակի տպագրած գրքերի ցուցակը, տալիս է և այն աչխատութիւնների վերնագիրները, որոնք առանձին գրքերով չեն հրատարակված, բայց տպուած են զանազան պարբերական հրատարակութիւնների մէջ։ Ես չեմ ուզում բացատրել, թէ որքան տաժանակիր աշխատանք է որոնել լրագիրների, ամսագրերի կոյտերի մէջ մի հեղինակի գրուածքները։ Դժուարութիւնը ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Ես հէնց այդ դժուարութեամբ եմ բացատրում այն, որ այդ տեղեկութիւնները, գոնէ ինձ յայտնի մի քանի դէպքերում, միանգամայն լիակատար չեն։

Օրինակ, Ալհարոնեանի[1] գրուածքների ցուցակը սաստիկ թերի է։ Այտընեանի հեղինակութիւնների մէջ չէ յիշված «Աէր արտաքսված» վէպը որ տպուած է «Մշակի» մէջ։

Շատ գնահատելի է և երկրորդ նորութիւնը։ Հ. Պազիկեան միայն գրքերի հետ գործ չունի, նա տեղեկութիւններ տալիս է և գրական հասարակական հարցերի մասին։ «Նոր Մատենագիտութիւնը կազմված է հեղինակների և գրքերի այբուբենական կարգով, բայց յանկարծ գալիս են անուններ, որոնք ոչ հեղինակ են, ոչ մի հեղինակի աչխատութիւններ. Այսպէս, է «օրինակ, Աչխարհաբար լեզու». դրա տակ չարուած են աչխարհաբարի քերականութեան բոլոր հեղինակների անունները։ Այդ դեռ հեչտ է։ Բայց ահա հետևում է «Աչխարհաբարի և Գրաբարի խընդիրներ». այստեղ կայ տաժանելի աչխատանք։ Երեք սիւնակ տեղեկութիւններ են հին և նոր հրատարակութիւններից. աչքը չլանում է համարներ, թուականներ ցոյց տուող թուանչանների բազմութիւնից։ Բարեկարգ վանքում նստած վարդապետից միայն կարելի է այդպիսի մանրակրկիտ համբերատարութեան սպասել։

Ես միայն մի քանի փաստեր բերի, ամենից չատ աչքի ընկնողներից։

Բայց կարծում եմ, որ այսքանն էլ բաւական է, որ ընթերցողը իմանայ թէ ինչ մատենագրական գանձ է պատրաստվում Վենետիկի Մխիթարեան վանքի մէջ։ Պակասութիւններ էլ, ի հարկէ կան այս հսկայ աչխատութեան մէջ. երբ մանրամասն տեղեկութիւններ տրվում են Գաբրիէլ Եպիսկոպոս Այվազեանի մասին. այդ, ի հարկէ, չատ և չատ հասկանալի է։ Բայց անհասկանալի է թէ ինչու այդ նշանաւոր գրողի կողքին դրված է Նրա եղբայր Յովհաննէսը, որ որքան էլ աչխարհահռչակ ծովանկարիչ էր, բայց հայկական գրականութեան մէջ, որքան էլ սա համեստ ու խեղճ բան լինի, տեղ բռնելու իրաւունքը չունի նա, քանի որ միչտ խորթ է եղել, թէ հայոց լեզուին և թէ գրականութեան։ Հ. Պազիկեան գրել է Այվազովսկու անուան հանդէպ ոչ թէ նրա գրուածքները, այլ նրա մասին գրուած յօդուածների ցանկը։ Բայց այդ յօդուածները իրանց հեղինակների սեփհականութիւնն են և ոչ թէ Այվազովսկուն են պատկանում։ Չեւևելով

1. Պ. Լէոի դիտողութիւնը իրաւացի է. ինչպէս վերևում, ծրագիրս հետզհետէ ընդարձակուած րլլալով նախընթացաբար քննած լրագիրներուս և հանդէսներուս այդ անուակի գրութիւնները չէի հաւաքած. կրկին պիտի աչքէ անցընէի. ոչ միայն Ահարոնեանի, այլ և Աղայեանի, Լրիցեանի, են, ևն, յօդուածները դրեթէ բոլոր կը պակսին, բայց ես զանոնք հաւաքած և նշանակած եմ իմ ինքնաեալ պրակիս մէջ։ Յաւելուածով կը դարմանուի ամէն ինչ։

այդ ուղղութեան, Հ. Վազիկեան «Հայկական նոր Մատենագիտութիւն» անունը կրող գրքի մէջ պիտի գետեղէ և այն անունները որոնք յայտնի են դարձել պետական և հասարակական գործունէութեան ասպարէզներում, օրինակ՝ Նուպար–փաշա, Լազարեաններ, Օրբիս–Մելիքով և այլն։ Բայց այդ դէպքում վիրաւորվողը կը լինի հայոց գրականութիւնը։ Աւելի լաւ է հետևել որոշ, խիստ սիստեմի [1]։

Սրանք, սակայն, այնպիսի պակասութիւններ չեն, որոնցից չափազանց ընասվէր գրականութեան պատմութիւնը։

Հ. Վազիկեանի գործը ունի և ակամայ պակասութիւններ, որոնք առաջանում են անկախ հանգամանքներից. այսինքն նիւթերի, տեղեկութիւնների բացակայութիւնից։ Այսպիսի գործերում մի մարդու ոյժերը, որքան էլ մեծ լինեն, բաւական չեն։ Պէտք է օգնել, պէտք է թեթևացնել աշխատութեան անասելի ծանրութիւնը։ Հ. Վազիկեան չատ է աշխատել, որ իրան օգնեն։ Նա դիմում է հեղինակներին, թարգմանիչներին, հրատարակիչներին, խնդրում է գրքեր ուղարկել։ Բայց ինչպէս ուրիշ չատ այդպիսի դէպքերում, չատ քչերն են ուշադրութիւն դարձնում այդ դիմումների վրայ։ Եւ այսպիսի մի անկուլտուրական վերաբերմունքից յետոյ էլ մենք դեռ իրաւունք կունենա՞նք կատարեալ, անթերի գործ պահանջելու։

Շնորհակալ լինենք, որ վենետիկի միաբանութիւնը դարերի ընթացքում խնամքով հաւաքել ու պահել է իր ձեռքն ընկած ամեն մի հայերէն տպագրութիւն։ Եթէ չը լինէր այս հանգամանքը, մենք այսօր չը պիտի ստանայինք այնպիսի պատկառելի, իւրաքանչիւր գրագէտին հարկաւոր աշխատութիւն, ինչպիսին է «Հայկական Նոր Մատենագրութիւնը»։

Մշակ 1904. թ. 214. Լ(ևոն)

ԴՐՔԵՐ ԵՒ ՄԱՐԴԻՑ

Ֆանի մը օր առաջ ստացայ առաջին պրակը «Նոր Մատենագիտութեան» զոր սկսած է հրատարակել Հ. Արսէն Վազիկեան։ Այդ առաջին պրակը բաւական որոշ գաղափար կու տայ ամբողջ աշխատութեան վրայ, և այդ գաղափարը վերջին ծայր նպաստաւոր է։ Հ. Վազիկեան կ'ուզէ մեզի ամբողջական ցուցակը տալ հայերէն լեզուով տպագրուած բոլոր գրքերուն, գրքոյկներուն, պարբերականներուն՝ տպագրութեան գիւտէն մինչև այսօր։ Ուղեցեալ Հ. Գաբրիէլ Զարբհանէլեանն է որ հայոց մէջ առաջին փորձն ըրած է այդ ցուցակը կազմելու, և հրատարակած է «Հայկական Մատենագիտութիւն» մը, որ ցայդ միակ աշխատութիւնը եղած է իր տեսակին մէջ. այդ գործը հեռու էր ամբողջական ու կատարեալ ըլլալէ. յարգելի Մխիթարեանը իր ցուցակը կազմած էր՝ մեծ մասամբ անուղղակի ազբիւրներու դիմելով, ու սխալներ ինչպէս և պակասներ չատ կային իր գործին մէջ։ Հ. Վազիկեան վերսկսելով իր նախորդին աշխատութիւնը, բաւեզգուշութիւն ունեցած է ուղղակի քննելու իր նիւթը – օգտուելով գրքերու և պարբերականներու այն ճոխ հաւաքածոյէն զոր այժմ ունի Ս. Վազարու վանքը և որ Հ. Զարբհանէլեանի օրով չատ պակասաւոր էր։ Վանքին մէջ պակսած գրքերուն ու պարբերականներուն վրայ ալ որոշ ու ճշգրիտ ծանօթութիւններ ունենալու համար, Հ. Վազիկեան կատարած է բոլոր հարկ եղած դիմումները, յուրջ քննութենէ անցուցած է իրեն ղրկուած տեղեկութիւնները, ո և է չանք չէ խնայած վերջապէս՝ իր գործը կատարեալ ու անթերի ընելու համար։ Ցաջողած է բացարձակապէս։ Չեմ գիտեր. ոչ մէկ միջոց չունիմ այդ մասին որոշ դատաստան յայտնելու համար. և արդէն այդպիսի ամենադժուարին գործի մը մէջ՝ վերջնական ու բացարձակ կատարելութիւն անհնար է. սա միայն հաստատ է որ Հ. Վա-

1. «Հանրագիտարան Հայ կեանքի»ն արդէն կ'արդարացնէ Ալվազովսկիին Մատենագիտութեան դէմն ներս մանելը՝ քանի որ հայ է. ա՛ս ալ չըլլար՝ արդէն սիպուած էի դնել իր անունը՝ քանի որ առանձին տեսրակ մ'ելած է իր անունով, (տես Հացուկի Հ. Վ.)։ Բայց ես կը հարցընեմ Գ. Լէօի. ինչ իրաւունք ունին Շահասը, Իսրայէլ Օրին և բազմաթիւ նմանները «Հայկական տպագրութեան» մէջ մանելու. կը պատասխանէ. «.... Հետևելով մեր գրականութեան, ես չէի կարող չը հետևել և մեր կեանքին, որովհետև այդ երկուքը–կեանք և գրականութիւն – չէ կարելի բաժանել իրարից։ .... ինձ սաւսի էին թէ գա գիտնական ժեւ չէ։ Թող այդպէս էլ լինի։ Ես միւոք էլ չեմ ունեցել սալ մի գիտնական աշխատութիւն, եթէ այդպիսի աշխատութեան հիմնական յատկութիւնը պիտի լինի չոր ու ցամաք պատմուածքը, եթէ գիտնականութեան համար պէտք է փակվել ընտրած ճիւղի սահմաններում, ենթադրելով թէ ընթերցողը գիտէ։ Ո՛չ։ Մեր ժողովուրդը – ես ամենից առաջ նրան եմ աչքի առջև ունեցել – ոչինչ չը գիտէ իր անցեալի մասին։ Իմ ուժերիս ներածին չափ օգնել նրան մի մասչելի, կենդանի կերպով պատմված գործով – այս էր իմ ամբողջ ժեռուը». «Հայկական տպագրութեան» էջ ատիպ, երկու խօսք, էջ 4։

Չէ՞ մի որ ե՛ս էլ նոյն մտքերն ու զգացումներն եմ ունեցել. ի նմին պատճի կամք, և կը համարիմ որ ո՛վ ալ այսպիսի աշխատութեանց զբաղի, մեզի պատճակից պիտի ըլլայ։ Ես շատ անգամ փափաք ունեցած էի կարդալ Լորիս–Մելիքովի, Պակևիչի, Տէր–Պետրոսեանի, Ալիշանի, Տաշեանի, կենսագրութիւնները, բայց ո՞ր գտնել. արդ ինչպէս կրնայի քննել ժեռքս և չընդհակել անոնց վրայ խօսող էջերը, ուրիշ ինչի նման շատերու փափաքին գոհացում տալու դիտումով, քէև գիտնայի որ ահագին՝ նոր նեգութիւններ կ'աւելցնէի ես ինծի։ Պ. Լէօի այդ դիտողութիւնները կարդալէս վերջ՝ գրեցի իրեն՝ ծրագիրս պարզելով, և հետևեալը պատասխանեց. «Եղեւտուկ, Օգոստոսի 11, 1904. .... Ձեր աշխատութեան վերաբերմամբ ինչ կարող եմ ասել, եթէ ոչ միայն հիացմունքս յայտնել։ Ալն ծաղիրը, որ Ֆուք հաղորդել էք ինձ Ձեր առաջին նամակով, բազմապատկեց հիացմունքս և ես կարող եմ միայն աղոթութիւն ցանկալ Ձեզ՝ այդ հսկայական մտայղութիւնն էլ իրագործելու։ Ձեր «Մատենադիտութիւնը» իրապէս մի անգին գործ կը դառնայ, եթէ աւելացնէք և այն, ինչ գրել էք ինձ, — եթէ բարեհաճէիք ուղարկել ինձ մի նոր մերքի, որին մէջ Ձեր նոր ծրագրի իրագործումը տեսնէի, ես ուրախութեամբ նորից մի յօդուած կը գրէի «Մշակի» մէջ»։

**

գիկեան չատ լրջօրէն ըմբռնած է իր գործը, և անոր կատարելութեան համար ըրած է մարդկայնօրէն կարելի եղած բոլոր ջանքերը։ Ասի մեծ արժանիք մըն է զոր պէտք է գնահատել։ Կայ ուրիշ արժանիք մըն ալ։ Դիւրին չէր, Հ. Պազիկեանի պէս երիտասարդ ու խանդավառ մտքի մը համար, որ արուեստագէտի չատ սիրուն խառնուածք մը ի յայտ բերած է Ռոսիանի և Տանդէի գեղեցիկ թարգմանութիւններով, լծուիլ այսպիսի չոր ու ձանձրանալի գործի մը, անոր զոհել ահագին մաս մը իր ժամանակէն ու իր ուժերէն. Հ. Պազիկեան այդ զոհողութիւնն ըրած է լիակատար կերպով, և ահա կու տայ մեզի արդիւնքը իր երկայն ջանքերուն. այդ արդիւնքը չատ գեղեցիկ է. ու բոլոր անոնք որ մեր մէջ հայ մտքին զարգացման պատմութեամբ կը զբաղին, երախտագէտ ըլլալու են երիտասարդ ու աշխատասէր Մխիթարեանին, որ իրենց կ'ընծայէ խնամոտ համապատկեր մը հայ մտաւոր գործունէութեան. ինչ որ անհնարապէս կը բազմապատկէ այդ աշխատութեան արժանիքը, այն է որ Հ. Պազիկեան չէ չատացած պարզ ցուցակ մը կազմելով. իր ծրագիրը չատ աւելի լայն է եղած. Հ. Պազիկեանի «Մատենագիտութիւնը» թղթատող մը հոն պիտի գտնէ իւրաքանչիւր հայ հեղինակի անունին քով՝ ոչ միայն անոր գրքի ձևով հրատարակութիւնները ցուցակը, անոնց անձնիւրին վերաբերող բոլոր մանրամասնութիւններով, այլ և այդ հեղինակին թերթերու, հանդէսներու մէջ հրատարակած յօդուածներուն ինչպէս և անոր օտար լեզուներով հրատարակած աշխատութիւններուն վրայ տեղեկութիւններ, անոր գործերուն մասին թերթերու, հանդէսներու, կամ գրքերու մէջ լոյս տեսած յօդուածներու, կենսագրականներու, քննադատականներու թուումը, երբեմն հատուածներու յիշատակումով ու մերթ նոյն իսկ կենսագրական ծանօթութիւններ՝ կարևոր հեղինակներու մասին։

Ահագին աշխատանքը զոր Հ. Պազիկեան թափած է այս ծրագիրն իրագործելու համար, պայծառ ու կոկիկ մեթոդը որով կատարած է այդ գործը, ամէն դրուատիքի արժանի կը կացուցանեն այդ աշխատութիւնը։

Ազատամարտ, 1904, թ. 4–5, էջ 90–91։ Ա. Չօպանեան

Ս. Պատրիարքը ստացած է այս օրերս Նոր Մատենագիտութեան (Bibliographie) առաջին պրակը, մասնաւոր յարգական նամակով մը, որով կը խնդրուի իր կարծիքը և դիտողութիւնները, այս աշխատութեան համար։

Այս գործին մէջ եկեղեցական հեղինակներու առանձին տեղ մը տրուած ըլլալով, բաց ի միւս նկատմունքներէն, Ս. Պատրիարքը այս հեղինակներու մասին ալ իր կարծիքը և դիտողութիւնը պիտի յայտնէ[1]։

Մատենագիտութիւն մը հրատարակելու գաղափարը առաջին անգամ յղացողը եղած է հանգուցեալ Հ. Գ. Զարբհանէլեան[2], որուն մատենագրական ծառայութիւնները ամէն տեն և ամէն առթիւ յիշատակուած են։

1883ին ինքն էր որ առաջին անգամ հրատարակեց, այբուբենական կարգով տպագրութեան գիւտէն մինչև այդ թուականը եղած հրատարակութեանց ցանկը, որ իբր նախաիրիճ և իր տեսակին մէջ ամենադժուարին գործ, չէ կրցած զերծ մնալ խոչոր պակասութիւններէ։ Այդ բանը զգացուելով, 1899ին ձեռնարկուեցաւ Մատենագիտութեան մէկ նոր տպագրութիւնը ընելու, կարելի եղած բարեփոխութիւններով, սրբագրութիւններով և յաւելումներով։ Չինգ տարուան[3] աշխատութեամբ երևան հանուած այս գործին առաջին պրակը, իր ստացած կատարելագործութեամբը և ճոխացմամբը և նոյն իսկ ուղղութեամբը բոլորովին նոր գործ մըն է, և բնաւ չի յիշեցներ նախորդ Մատենագիտութիւնը։

Նախ պէտք է ըսել թէ առաջին հայերէն տպագիր երկը որ 1565 ցոյց կուտար Հ. Զարբհանէլեան, նոր պրպտումներու չնորհիւ մինչև 1512 իջած է։ Հետևաբար 1512էն մինչև 1904 մեր գրական, նուիթեան ու տպագրութեան պատկերացումն է այս գործը, որ լոկ գիրքերու ցուցակ մը չէ։

Այս երկրորդ տպագրութեան առթիւ, դասակարգութեան ձևը՝ միայն գիրքերու անուանց հաձայն չէ եղած, այլ նաև հեղինակներու, թարգմանիչներու անուններուն, նիւթերուն և վիճրջապէս թուականներուն կարգով ալ դասակարգուած է։ Նոյնպէս, համոզում գոյացած ըլլալով թէ որչափ գիրքերու նոյնքան լրագրաց մէջ չահեկանութիւն և կարևորութիւն ունեցող կրօնական, գիտական և բարոյական նիւթեր պակաս չեն եղած, նշանակուած են լրագրաց մէջ երևցած բանասիրական, լեզուական, գրական և ուղղագրական յօդուածները, բոլոր հրատարակեալ գիրքերու վրայ գրուած քննադատական և մատենախօսական գրութիւնները, և գրքերու վրայ տրուած տեղեկութիւնները։

Պուրսա, 1904, թ. 1588.

1. Ինձի ղրկուած ղիւտղութիւններէր չէն արդարացներ այդ խօսքերը. այդ նիւթերու մասին ո և է դիտողութիւն եղած չէ ինձի ոչ նամակով և ոչ ալ հրապարակաւ։

2. Սխալ է այս տեղեկութիւնը. Մատենագիտութիւն հրատարակելու գաղափարն առաջին անգամ յղացողն եղած է Հ. Իգնատիոս (որ և եպիսկ.) Փափազեան. «Մեզ մէ շատ ատրի յատուց՝..... Ինձ. Իգնատիոս Փափազեան, մանր ու համբերող նրկայնմտութեամբ հաւաքեր էր հայկական տպագրութեանց ցուցակ մը, հասցընելով մինչև դարուս սկիզբը։ Իր ձեռագիր երկասիրութեանց մէջ հանդիպելով այս օգտակար և հետաքրքնական հաւաքմանն, ուզեցինք կատարելագործել իր պակասը, և լրացընել՝ հասցընելով գայն մինչև մեր օրերը». Հ. Զարպհան. «Մատենագիտութիւն», էջ փ։ Կեցած է դեռ Փափազեանի ժեռագիրը. կոկիկ և համակրելի ծրագրով և գրաբար լեզուով գործ մը, ուրկէ առած է Հ. Զարպհան. բոլոր հին տպագրութիւնները. ո՞ւր էր թէ անոր ծրագրին հետևած ըլլար....

3. Չինգ տարուան աշխատութիւն չէ գործս. սկսած եմ 1898ին և 1905ին վերջերը՝ հիւանդութեանս պատճառաւ դադրեցուցած. և կ'ըլլայ 8 տարի. 9ին մէջ եմ հիմա,

Այս տողերը կարդացողն անշուշտ հարցուց ինքն իրեն Քէ այս գործը գեանէՆ բուսեր է . . . . Սուրհանդակի խմբագրը կամ այդ տողերը քելադրողը փոքրիկ նեղութիւնն անգամ չանձն չեն առներ յիշելու անունն աշխատասիրողին՝ որուն մատներուն ծայրերը՝ լրագիրներու և հանդէսներու էջերը գարձընելէն՝ մաշե՛ր են արիւն գալու աստիճան, որուն աչքերուն լոյսը խաւարեր է այդ էջերուն մէջ յօդուած, գիրք, կենսագրական, ևն, փնտռելէն . . . .

Սուրհանդակի յիշած դիտողութիւնները պարունակող նամակը սպիտակած եմ հոս դնել .

Պատրիարքարան Հայոց
Կոստանդնուպոլիս *ի 19 հոկտեմբ. 1904*

Վեր. Է. Արսէն Վրդ. Ղազիկեան
ի Վենետիկ .

Հոգեշնորհ Սիրելի .

Յունիս 22 թուակիր նամակդ ստացած եմ ժամանակին . Աւելի կանուխ պատասխանած լինելու էի , եթէ հանդարտ կերպով և ուշադիր պէտ գրելու պատեհը ունեցած լինէի . Ջեմ դադար այլ պարագային վրայ որ Ջեր կ . գոլով անցնելում զՋեզ ծանչնալու բարեբաղդութենէդ զրկուած էր . . . . .

Առաջին տպաւորութիւնս , և գործոյն ընդհանուր կազմակերպութեան վրայ տեսութիւնս , որ պատեաւոր է ըստ ամենայնի , կը մաղթեմ կարճ և օգտութիւնս և տակուն համբերատարութիւն , որ վաղագոյն որչափ հնար է յաջողիք ի գլուխ հանել . . . . .

Գերազանցապէս օգտակար կը գտնեմ որ և է հրատարակութեան մը վրայ , յատուկ կամ պարբերական հրատարակութեանց գրածներուն ցուցակը — բուն մատենագիտութեան ծիրքը — որուն աշխատութի լինելը կ'զգայի . թէպէտ արտաքին փայլը մեծ չըլլայ , բայց օգուտն է մեծամեծ ; բայց նոյնպէս օգտակար չեմ դատեր գիրքի մը բովանդակութեան մանրամասնաբար ցուցակը , զոր գրչագրաց համար կը նախընտրեմք , այլ ոչ տպագրաց համար . Այս տեսութեամբ 49 էջէն մինչև 57 է . Ալիշանի «Այրարատ»ին բոլոր յօդուածներուն ցուցակը ի զուր հատորը կ'ստուարացնէ , մինչ այդ մանրամասնութիւնը բուն գիրքի կամ հատորը ծեռքի տակ ունենալէ ետքը կը վնտռուին , և այն առթիւ հատորին մէջ կը գտնուին [1] , թող որ եթէ այդ ոչը բոլոր նմանօրինակ հրատարակութեանց վրայ տարածուէր , քանի մը in foglioներ պէտք էր կազմել . իսկ քանի մը հատորի միայն ըմբռնել՝ համեմատական չափերէն դուրս եւած կը լինէր . (Ինչո՞ւ քանի մը հատորի միայն , ամէն ազգային գրոց . և ինչ ընտ քանի մը հատ in folioներ կազմելէ) .

(Հոս երկարօրէն կը խօսի գրաշարական կազմութեան վրայ , յետոյ Մատենագիտութիւն բառին վրայ , նմոյշին համարին վրայ՝ որ առժամանակեայ բան մըն էր , և ապա կ'անցնի Բնծայականին) :

Ջօրի հրևանի մէջ ալ կարծեմ աւելի իրական և արդար կ'ըլլար , որ «Մատենագիրք և քարգմանիչք ոխտիս» գրուէր , իբր նուէրի տէր , քանի թէ ազգիս , որոց խոստքը թերևս լոյս ալ չտեսնցու այդ նուէրի մասին [2] . . . . . .

Ողջունիս սիրոյ և քաջալերի զգացմամբ մնամ Սիրելութեանդ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐԾՆՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԴԻՏՈՒԹԻՒՆ

Է . Գ . Ջարպհանէլեանի « Հայկական Մատենագիտութիւն »ը վաղուց արդէն սպառած լինելով , Է . Ա . Ղազիկեան ձեռնարկած է նոր մը հրատարակելու , բայց բոլորովին նոր ու ընդարձակ ոճով մը որ 1512էն սկսած մինչև 1904 հայերէն լեզուով բոլոր հրատարակութիւնների ցանկը մանրամասն տեղեկութիւններով տալէ զատ , ո և է գրքի անունը փնտռելու և գտնելու զանազան դիւրութիւններ ընձեռած է :

Է . Ա . Ղազիկեան իր աշխատութիւնների այս գլուխ գործոցը գովելի փափկանկատութեամբ մը նուիրած է Վենետկի Մխիթ . Միաբանութեան Աբբահայր Գեր . Իգնատիոս Արքեպիսկոպոս Կիւրեղեանին որի քահանայութեան յիսնամեայ յոբելինի հանդէսը կատարուեցաւ այս տարի և որի ձեռնադրած քահանայներէ մէկն ալ է ինք Է . Ա . Ղազիկեան :

Սոյն Մատենագիտութեան առաջին թերթն որ իբրև նմոյշ լոյս տեսած է այժմ , ցոյց կու տայ թէ ի՞նչ մանրակրկիտ և երկարատև ուսումնասիրութիւնների արգիւնք մը պիտի լինի այս ընդարձակ գործ :

Արմաւիա 1904 , ԺՐ տարի , թ . 40 .

1. Այո՛ , գիրքը ժեռքը ունեցողը՝ բովանդակութեան մէջ կը նայի , և հատորին մէջ կը փնտռէ և կը գտնէ . իսկ չունեցո՛ղը . արդ լաւ չէ՞ որ գիրքը ժեռքը չունեցողը տեսնէ Գործին մէջ անոր բովանդակութիւնը , և ի հարկին դիմէ ունեցողի մը կամ նոյն իսկ գիրքը գնէ՝ անկէ օգտուելու համար : Եթէ ես , օրինակ , Պ . Լէօի « Հայկական տպագրութիւն » գործը դնէի անցնէի , ով ի՞նչ պիտի հասկնար անոր պարունակած Հայ կեանքի վերաբերեալ հազարումէկ կենսական խնդիրներու մասին : Եթէ Հ . Աթոռնեանի , Հ . Տաշեանի , ևն , բանասիրական գործերը դնէի անցնէի , ով պիտի երազեր անոնց շօշափած այլ և այլ խնդիրները : Ալիշան «Սիսուան»ին մէջ Ջէյքունի մասին խօսած տեղն՝ ոչ միայն կը յիշէ Ալամկերեանի « Ուղեւոր կամ Ջէյքուն » գործը , այլ և « Ա՛ռ գրուած հեղինակին առաքե՛ կ'ըսէ , զգանկացողս կենսական և բանասիրական գիտելեաց , նշանակելով ի սորին զգանկ բովանդակութեան զրոցն » , էջ 536 , ու ներքեւը գրելի բոլոր բովանդակութիւնը կը դնէ , և « Սիսուան » գիրքը՝ « Մատենագիտութիւն » մը չէ : « Այրարատ » գիրքն ունեցող Արքեպիսկոպոսի մը համար կըրնայ աւելորդ համարուիլ անոր բովանդակութիւնը . բայց իմ աչքերս կը դիտեն նաև Մանուշակի երկնահուպ սարերն իր խաչովն ու հրացանովն օրհնող Տէր Յակոբ քահանան ալ :

2. Պէտք էի աշխարհիս երես կողմը հայ գրագէտներուն և քարգմանիչներուն մէյմէկ շրջաբերական զրկել՝ անոնց հաւանութիւնը առնելու համար . մատդրուքիւն չըրի , mea culpa ! Է . Տաշեանի օրինակէն քաջալերուեցայ այդ տիպ քայլը ընելու , համաբերով որ անհաճոյ բան մը չէ ըսած , մասնելով մանաւանդ որ Հայ գրագէտներուն ու քարգմանիչներուն անձանօթ չէ Մխիթարեան մատուռին վրայ ունեցած խնամքն այն Անձին՝ որուն կ'ընծայէին իր հովանոյն տակ ճոնչող մատուռին այն խոյրիքը որ փնջուած էր իրենց աշխատութեանց : Եթէ սոյն դիտողութիւնն ընողը քարգման ճանչնայի Ազգային գրագէտներուն՝ կը փոխէի և ե՛ս ինքնին կ'ընծայէի : Բայց որովհետև չեմ ճանչնար , ընծայականը իր նախնական ձևին մէջ կր մնայ և վերջին պրակին հետ լոյս կը տեսնէ , քանի որ ոչ մէկ ազգային գրագէտ դիտողութիւն մը չըրաւ ինծի այդ մասին :

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1883-ին Ս. Պազարի մամուլէն լոյս տեսած էր «Հայկական Մատենագիտութիւն» անունով հատոր մը, որ մինչև նոյն տարին լոյս տեսած հայերէն գրքերու մէկ ցուցակն էր։ Շատ բաներ պակաս էին այդ հատորէն, և բնական էր, քանի որ առաջին փորձն էր։ Հիմա իր ուրիչ կարևոր հեղինակութիւններովը ծանօթ Հ. Արսէն Վ. Պազիկեան այդ երկասիրութիւնը հիմնովին փոփոխելով՝ սկսած է նոր տպագրութեամբ ի լոյս հանել, ճոխացած պատկերներով, մանրամասն տեղեկութիւններով, զանազան թերթերու մէջ լոյս տեսած քննադատական ծանօթութիւններով, զանազան թերթերու մէջ լոյս տեսած կարևոր յօդուածներու յիշատակութեամբ, և նոյն իսկ հայ հեղինակներու օտար լեզուներով գրած երկասիրութիւններու ցուցումով։ Մեզ ղրկուած նմոյշները ցոյց կու տան, թէ ամէն կերպով կատարեալ, խիստ գնահատելի և շատ կարևոր գործ մը պիտի ըլլայ Հ. Ա. Վ. Պազիկեանի «Նոր Մատենագիտութիւն»ը։ Պիտի ըլլան սակայն մի քանի անխուսափելի սխալներ, անկախ Հեղինակին կամքէն. օրինակ՝ Աբշակ Ալթունեանի հեղինակութեամբ տարիներ առաջ լոյս տեսած «Տեղեկագրութիւն Հայոց գաղթականութեան ի Մոլտո-Վլալաքիա, եւն». գիրքն իբր թէ տպուած ըլլայ Ֆոքշան, ինչպէս կ'երևի նոյն գրքին վրան, հետևաբար Հ. Ա. Պազիկեանն ստիպուած է այսպէս նշանակել իր «Նոր Մատենագիտութեան» մէջ [1]։ Բայց չատեր գիտեն թէ այդ գիրքը տպուած է Կ. Պոլսի մէջ։ Ուրիշ օրինակ մը. անցեալ տարի իբր թէ վառնայի մէջ վուլքօ տպարանէն ի «Rue Dankoff?) լոյս տեսած է «Հ. Ե». կեղծ ստորագրութեամբ 7 երեսէ բաղկացած հայհոյալից տետրակ մը։ Հ. Պազիկեան ստիպուած է նոյնութեամբ արձանագրել իր գրքին մէջ։ Բայց այդ տետրակը լոյս տեսած է հոս, Պարիսի մէջ. իսկ վառնայի մէջ «Voulko» անունով տպարան երբեք գոյութիւն չէ ունեցած։ Այս մանրամասնութիւնները կը յիշենք անոր համար, որպէս զի խստապահանջ չըլլանք ամէն բանի մէջ։

Բանասէր, Ձ տարի, 1904, թ. 5–7. էջ 189։

Ա. Ց. Բասմաճեան

Ինչ որ յաւէտ անմահ պիտի թողու Հ. Արսէն Պազիկեանի անունը, զայն մոռցանք զուրցել։ Իր հրատարակել սկսած Մատենագիտութիւնը։ Ջարպհանէլեան իրմէ առաջ նմանօրինակ երկասիրութիւն մը ունի թէև, այդ գործը սակայն հեռու է ամբողջական ըլլալէ։ Տեսած ու թղթատած ըլլալով այդ երկարաշունչ աշխատասիրութեան երկսիւնեան լայնադիր էջերով ինը ֆոլիանները՝ – ուր այլ տարին վերջակէտը իսկ դեռ չէ դրուած, – կրցի գաղափար կազմել թէ ամէն բանասէրի տրուած չէ փարիլ ատանկ ահագին ու տաղտկալի կերպով ցամաք աշխատութեան մը, երիտասարդ տարիքը կամայ խամրեցնել գիրի անվերջ պրպտումներու ու ցնորեցուցիչ թղթատումներու մէջ, թաղուիլ գիրքերու քառսային ծոցը ու թուականներ եւրևան բերել։ Ս. Պազարի վանքին հոյակապ Մատենադարանը իրեն օճան ունի անշուշտ՝ լիակատար գլուխ հանելու համար այդ պատկառելի գործը՝ որուն քով շա՜տ դիւրին է – զոր օրինակ – ստևները մէկիկ մէկիկ համրելը երկայն խոշոր մուշտակի մը։

Թէոդիկ

Մանգուտ. Լիֆքահ 1905, թ. 1178

«Անհչուր Դէմքեր» Հ. Ա. Վ. Պազիկեան

1. Ինծմէ անշուշտ մարզարէական չնորհք չի պահանջուիր. բնդի ծանօթ եղած այսպիսի տպագրութիւնները նշանակած եմ. անծանօթ մնացածներու մասին՝ գիտցողները չնորհ ընէին յայտնելու իրենց գիտցածը։

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

Ս. Երուսաղէմ $^{16}/_{29}$ Յունիս 1904

Մխիթարգոյ Ա. Արսէն Ղազիկեան

Ի Ս. Ղազար Վենետիկ

Սիրելի Ա. Արսէն

Մասնաւոր հաճոյքով մը կարդացի Ջեր $^{11}/_{6}$ թուակիրը, կը նորոգէք յիս ամուշիկ յիշատակները այն օրերուն, զոր քանի տարի առաջ քանի՛ցուցի ի Պարտիզակ. ուր կը ծլին ու կը ծաղկին ամուշարոյր ծաղկանց խումբերու հետ մտաւորական ակատելի ծիրքերով օժտուած և գեղազնի զգացմամբ առյցուն հայորդիներ. Դուք մին այդ համակ հայաբնակ գիւղաքաղաքի պատուական զաւակներէն կը փայլիք ձեր մտաւորական կարողութեամբը, տաղանդովն և ազգասիրական զգացմամբը։ Գոհունակութեամբ սրտի կը տեսնեմ Ջեր գրական այնքան գնահատելի գործունէութիւնն և Ջեր կորովն ու արիութիւնը հանդէպ Ջեր քննադատներուն.

Գալով Ջեր «Հայկական Նոր Մատենագիտութիւն» աշխատասիրութեան, որու մէկ քանի թերթերը ղրկած էիք իւր Ամոյշ, ազնիւ համեստութեամբ մը ամենասկիզբն գործ կ'առնուած էք. այն ինչ Ջեր այդ գործն ա՛յնպիսի նոր ծրագրով և ուղղութեամբ մը օժտած էք, որ ամէն մասամբ կատարեալ նոր գործ մըն է, և արդիւնք՝ իրաւ իրաւ տաժանելի աշխատութեան.

Շարունակեցէք, Սիրելի Ա. Արսէն, Ջեր գրական գործունէութիւնը զարգացեալ պարտիզակցիի յատուկ մտաւորականով, եռանդեամբ և տոհմասիրութեամբը։ Ազգին մտաւորական պէտքերուն գիտակ բոլոր հայորդւոց հետ սրտագինս կը մաղթեմ Ջեզ և Ջեր միաբանակից պատուաժան եղբարց ամէն յաջողութիւն.

Սիրալիր ողջոյնիս աղօթանուէր ի Քրիստոս

ՄԱՏԹԷՈՍ ԵԳԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ

Նամակիս մէջ ակնարկութիւն ըրած էի՝ Նորին Վեհափառութեան ասկէ 26 տարի առաջ ի Պարտիզակ յաղթական մուտքին, ուր եկած էր երեք քահանայ օծելու. և ես քէպէ հազիւ 12 տարու, բայց բարեբախտութիւնն ունեցած էի Նորին Վեհափառութեան հանգկերելի և ներշնչող դէմքն աւելի մօտէն տեսնելու՝ օծեալներէն առաջինը՝ Տէր Սահակ Քահանայ Աբրահամեան՝ մօրեղբայրս ըլլալով. ինչ նմոյշը և քէ՛ նամակը յղեցի ինձ ծանօթ. Մեծ. Սեր. Վ. Սամուէլեանի հետևեալ նամակէն շարժեալ, և իր ժեռքով։

Ազգաւարոյր և պատուական եղբա՛յր.

. . . . . Ամենամեծ ուրախութեամբ լուեցինք որ բազմավաստակ հայրդ սկսած էք հայ Մատենագիտութեան մոր և ընդարձակ պատմութիւնը հրատարակել Ս. Ղազարու տպարանէն. – կարողութիւն և յաջողութիւն կը մաղթեմ Ջեզ ի բոլոր սրտէ. Միակ դիտողութիւնս, մանաւանդ թէ փափաքս այս է թէ՛ լաւ կ'ըլլար որ ասանկ պատուական գործ մը հրատարակուէր յառաջիկայ 1912 թուականին հայ տպագրութեան սկզբնաւորութեան 400 ամեակին առթիւ. — Եղբա՛յր, ինչո՞ւ այնքան կ'աճապարէք, փա՛ոք Աստուծոյ տակաւին երիտասարդ էք.

Ամեն. Տ. Մատթէոս Ս. Պատրիարք հայրը հրամայեց ինծ գրել Ջեզ և խնդրել, որ եթէ կարելի է հայ–Մատենագիտութեան առաջին ֆօրմայէն մէկ օրինակ ղրկէք Ն. Ամենապատուութեան «իմ հաւսգէովս» և ապահովագրեալ ծրարիւ. Երբ ֆորմսն հասնի՝ կ'աշխատիմ որ իւր դրաւոր տպաւորութիւնն ու դիտողութիւնները ուղարկեմ Ջեզի. – եթէ յարմար տեսնաք ու գերապայծառ Ս. Հայրը թոյլատրէ՝ այն առթիւ կարող էք յատուկ նամակ գրել ուղղակի Ն. Ամենապատուութեան և իւր դիտողութիւնները խնդրել. ասանկ բաներու շատ փափաքող է և շատ ալ ծեռնհաս. Անհրաժեշտ է որ Ջեր ղրկելիք նամակը ապահովագրեալ ծրարիւ ուղարկէք, ուրիշ կերպով դժուար թէ իւր ծեռքը հասնի . . . . .

Ս. Ուխտիդ շնորհապարտ և Ջեզ աղօթակից

Խ. Ե. ՍԵՐ. Վ.ՐԴ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

Ս. Երուսաղէմ 3 Յունիսի 1904

Դպրեվանք
Պատրիարքութեան Հայոց *4 Յունիս 1904.*
Ն. Գոլոյ ՅԱՄԱՇ *Ամաշ*

Հոգեշնորհ Ա. Արսէն Վարդապետ Ղազիկեան
Ի Վանս Վենետկոյ

Սիրելի Վարդապետ

Չը ցաւիմ որ չկրցայ ժամանակին պատասխանել Ջեր նամակին՝ տկարութեանս պատճառաւ, որ վերջերս ալ քիչ մը նեղեց զիս։

